

Քաղաքային և գյուղատնտեսական հարցերի մասին
Քաղաքային և գյուղատնտեսական հարցերի մասին
Քաղաքային և գյուղատնտեսական հարցերի մասին
Քաղաքային և գյուղատնտեսական հարցերի մասին



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 10 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կայսերական զորքը Չայլարի առջև մեծ յաղթով թիւն մ'ալ տարաւ։ Թշնամին Չայլարի բանակը զորացուցած էր։ Պէրսիական նոր զօրք բերելով։ Անցեալ երեքշաբթի առաւօտ Եօթն հազար զօրք Չայլարի մէջ թողուց ամբողջութեամբ պաշտպանելու համար, և տասնեւթի հազար զօրք Վիտինի Օսմանեան զօրաբանակին վերայ յարձակեցաւ, անտառներուն մէջ դարաններ դնելով, բայց Օսմանեան զօրքը քաջաբար դիմադրեց, այնպէս որ թշնամին ինքզինք պաշտպանելու համար պարտաւորեցաւ դարանի դրած զօրքն ալ երեւան հանել, և իւր բոլոր զօրութիւնը ցուցնել։ Պատերազմը քանի կերթար կը սաստկանար, ուստի հրաման դրնաց Թերեք Ֆաղլը փաշային, որ Ատլէ կը գտնուէր, որպէս զի թշնամւոյն ետեի կողմն անցնի։ Ֆաղլը փաշա այս շարժումը կատարեց, և նոյն միջոցին Օսմանեան որսորդ զօրաց պաշտն, որ իւր դրօշին վրայ Գ կարգի Օսմանիէ պատուանշանը կը կրէ, հրաման ստացաւ կայսերական բանակին աջ թևին դէմ թշնամւոյն թնդանթներուն վրայ յարձակելու։ Որսորդ զօրքը թշնամիէն 3 թնդանթով, 2 սայլ ուղղամիտեք կործնեց, և 7 թնդանթանիկը ձի առաւ։ Սերվիւացիք յետո նահանջելու պարտաւորեցան, և Թերեք Ֆաղլը փաշա զիրենք մինչև Չայլարի առջև քնեց։ Ժամ 8 1/2 ին պատերազմը վերջացաւ, թշնամին 2000 մեռեալ թողուց պատերազմի դաշտին վրայ։ ասոր կրկնապատիկն ալ վերաւոր ունեցաւ։ Իսկ Օսմանեան զօրաց կորուստն եղած է 2 Գօլ աղասի և 50 զօրական մեռեալ և 160 էն աւելի վիրաւորեալ, թշնամիէն առնուած աւարներն յաղթանակաւ բանակետը բերուեցան, և զօրքը « փառնաշնամ » պին եաշա » ազադակելով 21 թնդանթով նետուեցաւ։

Պէրսիական կողմն ալ, կը հեռագրէ իւր թիւրքի վիտինի թըղթակիցը, երեքշաբթի օրն երեք հազար Սերվիւացիք Օսմանեան « վաշտ մը » զօրաց վրայ յարձակեցան, բայց ի փախուստ դարձան, 250 մեռեալ ձգելով։ Կայսերական զօրքն ալ քանի մը մեռեալ ունեցաւ, որոց մէջ է եղեր Ատլիէ Միւֆիդին։

Եէնի-Պաղարի կողմը, ի վա Մուսթաֆա փաշան և զնդապետ Էօմէր պէյը, Տատովնայի բարձանց վրայ երեք հազար չափ Սերվիւացի պատահելով վրայ յարձակեցան, և զանոնք ի փախուստ դարձուցին։ Սերվիացիք Ոգլա գետին միւս կողմն անցան,

իրենցմէ 300 հոգի գետատոյգ եղան, և 36 դիակ մնաց պատերազմի դաշտին վրայ։ Օսմանեան զօրաց կորուստը համեմատաբար քիչ է։ Դրօշ մը, հրացաններ, ատրճանակներ և ռազմամթերք աւար առնուեցան։

Երեք հազար չափ Գարատաղիք ալ դիշերայն Բաթկորիցայի կողմն եկան, քաջաբար յանկարծ կոխելով դրաւ և համար։ Բայց երկու ժամ պատերազմէ ետե ի փախուստ դարձան։ Հարիւրի չափ մեռեալ և վիրաւոր թողլով։ Շքորայի բանակին հրամանատար Ալիմէտ Համիտի փաշա կը պատրաստուէր Գարատաղ մտնելու, և ի մօտը իւր շարժմանց վրայ լուր կ'սպասուէ։

Լէվընթ-Հէրըտ լրագիրը Ռաւիւզայի իւր թղթակցին մէկ հեռագրով յայն համեմատ կը ծանուցանէր թէ Գարատաղիք Քլէքի Օսմանեան փոքրիկ ամրոյն առեր, և մէջը գտնուած 180 ի չափ զօրքը սուրէ անցուցեր են։ Բայց այս լրոյն ստուգութիւնը տակաւին չէ հաստատուած։

Աւստրո-Հունգարական կառավարութիւնը Քլէքի և Դաղմատիոյ ջուրերն Օսմանեան նաւերուն առջև գոցելու որոշումը ետ չառաւ։ Կայսերական կառավարութիւնը դեռ կը խորհի ասոր վրայ, բայց չգիտցուիր ասկաւին թէ ինչ որոշում պիտի առնուի։ Ս. Ա. Այժմ Քլէք զօրք և ռազմամթերք տանելու համար անցեալները ճանաչեալ եղած երեք պատերազմական շողերուց ետ դառնալու պարտաւորեցան։ Բերայի մէջ նոր հրատարակուած ի վէճման լրագիրը կը ծանուցանէ թէ երկուշաբթի օրն Աւստրո-Հունգարական դեսպան Չիլի կոմսն ուրիշ առաջարկութիւն մ'ալ ներկայացուցեր է Բ. Դրան, ծանուցանելով որ եթէ մինչև երկու շաբաթ Օսմանեան զօրքը Սերվիոյ հետ պատերազմը չվերջացնէ, Աւստրո-Հունգարական կառավարութիւնն իւր Սլավ հպատակաց շարժման առաջն առնելու համար պիտի պարտաւորի Սերվիա զօրքը վերելով գրաւելու։ Այս զինուորական միջամտութիւնը ծանուցելու է. ուստի առ այժմ չենք կրնար վերոյիշեալ լրագրոյն բաժին հաւատ ընծայել, թէ և ժամանակէ մ'ի վեր Աւստրիական կառավարութեան բռնած ընթացքը բոլորովն անհաւանական չլուցնէր զայս։

Ներկայ պարագայից մէջ երկրորդական խնդիր մ'ալ ծագեցաւ։ Անգղիական թայմը և Տէյլի-Նիւս լրագրաց Կ. Պօլսոյ թղթակցները բազմաթիւ խօսքով թեան գործեր կը պատմեն, որը Պուլլարատանի մէջ ի գործ դրուած են եղեր Պաշը-Պօզուգներու կողմնէ։ Գլխաւորապէս

* Լա թիւրքի լրագիրն այս լուրը բացարձակապէս ստույգ կ'անուշ։

կրտէին թէ հարիւրի չափ Պուլլարի գիւղ հոյ ճարակ եղան, առնուեցն քանակէն հազարի չափ անգլէն անձինք սպաննուեցան։ Հազարէն աւելի Պուլլար մանկունք իբրեւ գերի վաճառեցան. սարսափելի տանջանք տրուեցան ձերբակալեալ ապստամբաց, կանանց պատիւը բռնաբարեցաւ, տասն հազարի չափ Պուլլարը բանտարկեալ են, և քաղաքները պատրաստաւ Պուլլարաց ամեն տեսակ թշնամանք կը լինի։ Այս պատմութիւններն Անգղիոյ հասարակային կարծիքը սաստկապէս յուզեցին, խորհրդարանին մէջ հարցում եղաւ նախարարաց՝ այս գործերուն ստուգութեան վրայ. իսկ նախարարք յայտարարեցին թէ Կ. Պօլսոյ դեսպանէն և թուրքիոյ դաւաճները գտնուած Անգղիական հիւպատոսներէն առնուած տեղեկագրերն այնպիսի վայրագութիւններ չեն ծանուցաներ։ Այս սու ամենայնիւ, խօսք տուին դեսպանական գրութիւնները խորհրդարանին ներկայացնելու, և դեսպանէն նոր տեղեկութիւններ խնդրելու։ Հետեւեալ դեսպանին հրաման եկաւ Բ. Դրան հետ այս մասին բանակցելու և քննութիւն ընելու։ Դեսպանատան Բ. քարտուղարն և Ալբրիտուսիոյ հիւպատոսը քննել կարգեցան։ Բ. Դուռը փութաց գործն ուշադրութեան առնելու, և վսեմ փեանի փաշան քննիչ պաշտօնով Պուլլարը տան զրկեց։ Բարձր Մեծ-Եպարքոն ալ պաշտօնական յայտարարութիւն մը հրատարակեց աղբարարելով Պաշը-պօզուգներուն իսկից եղեւ նազործութիւն ընեն, որկոյն մահւան պատիժ պիտի կրեն։ Արդէն Պաշը-Պօզուգներու գլուխ մը, Հաճի Մուրատ անուն, որ իւր անցած տեղերն իւր մարդոց հետ աւագակութիւն կը գործէր, ձերբակալուելով անցեալ օր Ֆիլիպէի մէջ կախուեցաւ։ Իւր մեղաւորները տակաւին գատաստանի ներքեւ են։ Բայց այս անոպայ և անկարգ խուժանն՝ այսպիսի պատիժներով փոխանակ զգաւատանալու առաւել կը լրջանայ, և վրէժխնդրութեան ոգւով ծանր ծանր ծանր եղեւ։ Նազործութիւններ կընէ։ Բ. Դուռն իմաստութեամբ որոշեց որ կանաւորաց զինուորագրութիւնն առ այժմ դադարեցնէ, և հրամայեց որ ոչ ևս գրօշներով և թմբուկներով փողոցները շրջագայութիւններ ըլլան, այլ իւրաքանչիւր ոք իւր գործով զբաղի։

Պաշը-Պօզուգներուն եղեւնազործութիւնները միայն ապստամբութեան միջոցին չ'ապստահեցան, այլ տակաւին կը շարունակէին, թէ և վասն ճշմարտութեան պէտք է ըսել թէ Պուլլար ապստամբալ ի սկզբան սպանութիւններ գործելով պատճառ տուած են վրիժառութեան։ Ալբրիտուսիոյ զօրքն անմիջապէս մը, զոր

Լէվընթ-Հէրըտ լրագիրն հինգշաբթի առաւ թուոյն մէջ հրատարակած է, կը ծանուցանէ թէ վեց հարիւրի չափ Պաշը-Պօզուգներ յուլիսի 11ին թաթար-Պաղարձըք երթալու ժամանակ Եէնի-Մահալէ անուն գիւղն աւարեցին։ Երեք Պուլլար մը՝ որ գիւմարութեան փորձ կ'ընէր, սպաննելով ջարդաւորող բրին և մարմնոյն կտորուանքը շուներու առջև նետեցին։ Յիշեալ Պաշը-Պօզուգներն յուլիսի 12ին Ֆիլիպէին ճանաչեալ եղան, երկաթուղոյն գործաւորաց անակներն աւարելով։ Գիւղացիք զարհուրանաց մէջ էին, կանոնաւոր զօրքը Սօֆիա գնացած էր, և կուսակալը գործուած եղեւոնքը չտեսնել և չըլսել կը ձեռնարկէ։ Չենք գիտեր թէ վերոյիշեալ մահւան պատիժն ընդունող հաճի Մուրատն ասոնց գլուխն էր, թէ նա ալ ուրիշ խմբակի մ'առաջնորդէր։ Վերագրեալ դէպքն օրինակ մը կրնայ ըլլալ Պաշը-Պօզուգներուն գործած ծայրայեղութեանց։ Յուլիսի 11ին, տասն և մէկ Պուլլարք՝ որ ապստամբութեան յանցանք բանտարկուած էին, ի մահ դատապարտեցան, և հինգը Եանպօլիի, երեքը Սիֆօյի և երեքը Ալբրիտուսիոյ մէջ կախուեցան։ Ալբրիտուսիոյ մէջ ութ հարիւրէն աւելի Պուլլար բանտարկեալ կը գտնուէր, որք դատաստանի կ'ապաւնէր Գաւառաց մէջ կամաւորաց զինուորագրութիւն կ'ըլլայ, և բազմաթիւ անձինք գրօշի ներքեւ կը ներկայանան։ Բայց չ'գիտցուիր թէ արդեօք կանաւորաց զինուորագրութիւնը դադարեցնելու որոշումը գաւառաց ալ կը վերաբերի թէ միայն մայրաքաղաքն է ի Մօսկա առնուած յուրերն այս կէտն ալ կըրնան պարզել։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիկենա 17 յուլիս։
Ապենտօսթ լրագիրն Եւրոպիոյ խաղաղական աշխարհավարութեան նշանները ցոյց կուտայ և կ'սէ թէ Սերվիոյ և Գարատաղի իշխանութեանց մէջ անհամաձայնութիւն ծագելով իւրաքանչիւր իւր հաշուին համար պիտի պատերազմի։

Լոնտոն 17 յուլիս։
Արեւելից ջուրերուն մէջ սպասող Անգլիական պատերազմի նաւերուն թիւը 135 հասնուեցաւ։

Պուրէշ 17 յուլիս։
Իտալական կառավարութիւնը Բուսաշիոյ հետ առեւտրական գաշնադրութիւն մը կնքելու փափաք յայտնէր։

Վիկենա 17 յուլիս։
Կիլիսիոյ կայսրն հինգշաբթի իրիկուն Սալոնիկէ հասաւ, ուր մինչև յուլիս 20 Աւստրիոյ կայսրն հետ պիտի նստի, և 21ին կ'աթմէյն պիտի երթայ։

Վիկենա 18 յուլիս։
Թուրքիոյ նորընտիր դեսպան Վօկօրիտէս փաշան այսօր հանդիպի կայսրի

ման վրայ . այժմ դժուար պիտի վերհանայ թէ՛ հարկ կայ լսելու յատեննիստ տոյն հարցման բայցապարտութիւնն . անոր պատասխանը ինքիւն ատենապետ պարտաւորեալ եմ ձեր կամքն ստուգելու և որոշման հետեւիլ . սակայն իրիւն երեսփոխան , և ի դիւանի աստ իբրեւ երեսփոխանաց երեսփոխան , պարտ անձին կը համարիմ խօսք մ'արտասանել սոյն խնդրոյն վրայ , որ իմ փորձառութեանս արդիւնքն է և ազգանուէր զգացմանս արտայայտութիւնը . այսպէս կաղաչեմ ձեզ նկատել զայս և ներել ինձ իրեւ ատենապետ ըրած պարտազանցութիւնս :

« Օսմանեան տէրութեան արդի վիճակը տաքնապալից է : Ըստ ի սկզբան հարցապահման խնդրոյն . և արդարեւ , աշխարհապարտական շիտթութիւնք , դրամական անձուկք , և թշնամական յարձակմանք այն աստիճան դժուարացուցած են այսօր տէրութեան վիճակն , որ ամեն միջոց և նմանը չտեսնուած միջոցներ ձեռք առնելով՝ այս ճգնաժամէն ազատելու կը ճգնի : Մեր աշտոյ տուջին կատարուեցան մեծ փոփոխութիւնք պաշտօնակալաց տէրութեան , սկսեալ յամենամեծէն . փոփոխութիւն մոյցունել կաշխատուի նոյն խի վարչական դրութեան մէջ . փոփոխութիւն մտած է աշգէն այլակրօն ազանց փոխադարձ զգացմանց մէջ . Մահմետական դուռնդ . դուռնդ կանոնաւոր և կամուր զէնք առած յարեւելից և ի հարաւոյ յարեւմտս և ի հիւսիս պատերազմի կը դիմեն : Տէրութեան դանձն՝ Եւրոպոյ դրամատարը քով իր վարկին փնտրելու վտանգի մէջ՝ դիտելին պատերազմական ծախսոց հոգածութեան կը նըւերուի . մասնաւորապէս քսակն իր անձուկ վիճակին մէջ՝ հասարակաց օգտին նպատակելու կը փութայ . մինչև անգամ գեղեցիկ սեւերն մատուցը , ոչ միայն քրիստոնէսաց ազանց , այլ և այն ազգաց որք նշանակութիւն չեն ընծայեր անոր դոյրարիկ դորովագութ զգացմանց , ի դուրման վերաւորելոց , տէրութեան օգնելու կոչխտակն : Յոյն երկրատարը . խաչն ու Մահիկը կարմիրփայլ դրօշակին վրայ պարզելով կամուր զինուորութեան կը դիմեն՝ ամեն ազանց ողատութեան և առանձնաշնորհութեանց սպառնացող ամենակուր դուրախարի մը արշաւանաց դէմ մարտնչելու համար : Մեր Հայերս ինչ պէտք է ընենք այսպիսի պարագայից մէջ :

« Ես չգիտեմ մեր վարչութեան արարքը , և չե՛մ ներքի քննադատել որեւէ պաշտօնական եղելութիւն՝ պէտք եղած բացատրութիւնը լսելէ առաջ . սակայն գիտեմ և հրապարակաւ կը յայտարարեմ որ եթէ մենք մեր կրօնքին և լեզուին պահպանութեան և տառնին վարչութեան մենաձեռնարկութեան և ի վերջոյ ազգային ինքնիշխանութեան համար չնորձադարաւ չ'ըլլայինք Օսմանեան տէրութեան , և ինչէ ազգային շահուց տեսնուելով սոյն տէրութեան բաղդակից չ'գտնուէինք , դարձեալ բարոյական քրիստոնէական և հայրենասիրական զգացումովք իրեւ մարդ . իբրեւ քրիստոնէայ , իբրեւ քաղաքացի , պարտաւոր էինք օգնութեան հանելու ներքից բոս չափու մեր կարողութեան , Ուստի կը դուրս մերազնեայ տիկնայց մարդասիրական եռանդն , որով նպատակ վաճառելին պատերազմի դաշտին վրայ անկեալ վերաւորելոց անխախտ ամեն հայրենակցաց , և պատուաւոր յիշատակութեան մը առիթ տուին մերազնեայ իրաւորութեան օտար ազգաց . կը գովեմ և կը քաջաբերեմ՝ այն ամեն արարք

որ յօդուութիւն տէրութեան կ'ընդրատին , որովք անցելոյն ընկալեալ շնորհաց գեթ մասամբ վստախնութիւն մ'ընելէ զատ , ապագային յուսալի բարեաց կանխանութէր ծառայութեամբ իրաւունք մ'աւելի ստացած կ'ըլլանք : Ես չեմ ուզեր ճշգրէ ինչ պէտք է ընել մեզ այժմ՝ ազգովին կամ ի մասնաւորի . բաւական է որ ամեն բք համազուի թէ ձեռք որ ընենք յօժանդակութիւն տէրութեան , կ'անդադրուինայ ի մեզ յօգուտ ազգութեանս : Այս խորհրդածութեամբ կ'առաջարկեմ որ փոխանակ տեղի տալոյ հարցադատականութեան վիճարարութեան , որոյ մէջ անխոհեմ խօսքեր կրնան ստղծուիլ , զոյնք սա միջադէպը միահամուռ քուէարկելով « անցնել մեր օրակարգին » փորձառութեան յայտնելով մեր վարչութեան խառնաճեղք :

Սոյն առաջարկութիւնը քուէի դրութեամբ ստուգելու մեծ ամանութեամբ ընդունուեցաւ :

Միջադէպն այսպէս գոյուելէ ետեւ , ժողովը օրակարգին անցնելով , թաղային մատակարարութեան դըլխոյն վրայ Ռուսիան եփէնտի Ներկայացուցած թաղային ժողովոյ ծրագիրը յօդուած առ յօդուած քննելով՝ մինչև վեցերորդ յօդուածը քանի մը թեթեւ բարեփոխութեամբ ընդունեց :

Սոյն միջոցին օգին ջերմութեան պատճառաւ ժողովականք մեկնիլ սկսելով՝ ժամ 9 Ա. Է. ին ատենը դոյրուեցաւ երեք շարքէն զամբարուելու որոշմամբ :

1876 յունիս 30 ի Զարանպա

Խմբագիր Տէր .

Ամբար 25ին Տէրութեան Գեր . Յարութեան արքայականութեան փոխարկութեամբ տեղս ժամանեց : Յիշեալ սրբազան հօր Սամուէն ճամբայ ելնելուն լուրը երբ ազգայնոց հաղորդուեցաւ , խիստ մինչ ի Սամուէն երկու պատուաւոր անձինք զիւրեւելն զինն տեղոյս երեւելիներով մի կողմէ Նորին դերաստութեան վրէժն զինուորներու զնայնիք զրեթէ երեք ժամուան տեղ :

Գայմազամ Ֆէրի պէյն՝ որ հայասէր անձ մ'է , փութօք ընկերակցել ընդ մեզ քանի մը դապիթի մը . նոյնպէս Յունաց երեւելիներէն քանի մը անձինք ալ :

Գայմազամ պէյն ի զինաց Հոյ ազգին մասնաւոր շնորհակալութեանս արդէն յայտնած ըլլալով , այսօր ալ հրապարակաւ նոյնը երկրորդել կը փութամ : Եւ փութա՛մ որ նոր վերահաստատուած իւր փոխելի պաշտօնին մէջ՝ աշխուրջ հսկողութեամբ և անաջատար արդարութեամբ յայտնեալ պատեհ տակիւններ կուտայ մեզ կրկնապատկելու գոհունակութեան սոյն պարտականութիւնն :

Գեր . Յարութեան սրբազան՝ իւր հայրական կերպարանքն հանդերձ և իւր բազմամեայ փորձառութեամբը տեղի կուտայ մեզ յուսալ որ ժամանակաւ Տրոսպիլոնէն արտաքսեալ երկու անձնորձ փառք ապետաց անխոհեմ վարմանցը պատճառաւ նոր հանգարտած յուզեալ միտքերն ալ ևս չեն յուզուիր : Բերաճատաւութեամբ խաղաղութիւնը չի վրդովիճելու չոր մը հայրական խրատութեան ի բարին յորդորանքը :

Ազգայինք ալ մեծ և փոքր որդիական սիրով և հնազանդութեամբ պարտին մեծարել իսկեմադարէ բարձրաստիճան կը դերական մը , որ իւր կենաց մնացորդը խաղաղ կենեք իր տեսչութեանը յանձնուած փոքրիկ հօտին սիրոյ , միտքեան և խաղաղութեանը նուիրելու ուխտած է :

Գաւառիս նոր կուսակալ Վսեմ , Վէյսի փաշային անաշտ ընթացից և արդարաւէր բնաւորութեամբ վրայով Սամուէն հետեւեալ գրուած քննարկը կը հասնին առ մեզ : Կը լսենք որ Նորին վսեմութիւնը քանի մ'օրէն այցելութեան

պիտի ելնէ ի շրջապայս : Բնաւոր երբ ի մտոյ մեզ ևս նորա արդարասիրութեանս ակամատես ըլլանք՝ կը փութամ զեկուցանել Ձեզ ի հրատարակութիւն :

Այսինքն անուն հաշակաւոր Ձերքէզ առաջակալեալ մը , որ բաւական ժամանակէ ի վեր երկրիւ ազգած էր զիւրօրէից , այս անգամ Գայմազամ պէյն ջանիւք ձերբակալեալ Սամուէն զիւրեւցաւ :

Անցեալ տարուան հախառակ այս տարի ժամանակին առաջ անձրեւներ տեղուան հնձոց առատութիւնը խիստ յուսաւի է :

Թէրմի Նուհադի աղքատ զւարացոց վերջին ատեններս ուտելու և սերմանելու համար եղիպտոցներն չունենալը տեղոյս վաճառականներէն Մեծ . Սթարեան կարապետ աղային տկանջն հասնելով , ուրախութեամբ կը լսենք թէ իսկոյն աղքատիկ զիւրացոց ձրիարար առատ պարեն և ցանելու համար եղիպտոցներէն բաշխել տուեր է : Տաճիկը և քրիստոնէոցը սրտաբուրս բարեմակութեամբ իւրենք յիշեալ առատասիրտ հայազգի երկրատարը վաճառականին :

Տեղոյս երեւելի դերդատաններէն Խոտրէ . Ժողովոյ անդամ Պաշեան շահի կտրապետ Լիֆլիտի ազգապիտան և սուլթանապետական եւ անդը խիստ զովել է և շնորհակալութեան արժանի :

Այսպէս ի միասին երկուսեւ վարժարանաց օրինաւոր և հաստատուն հայացի մը հոյսով կը ելաւ աշխատող ուսումնաւոր ազգայնոց նպատակց սուցակն ալ ի մտոյ կը յղեմ տա ձեզ ի հրատարակութիւն :

Մնամ . . .

Թաւիթ Բ. Փաշեան

ԸՅՂ

Յառաջիկայ կիւրակէ օր վարդաւառի Տօնին , Տանն Աղթամարայ Ամենապատիւ Տ. Տ. Խաչատուր Ս. Կաթողիկոսն ըստ խնդրանաց Մեծ . Մաքսատան բեռնակիր Աղգայնոց՝ Աղգահանգանոց Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցանէ . և յետ պատարագի յիշեալ Աղգայնք իրենց բարենպատակ սովորութեան համաձայն հայկերոյթ պիտի տան բոլոր պատապարեաց :

Հոգաբարձութիւնս հարկ կը համարի ծանուցանել զայս Մեծարգոյ հասարակութեան , և հրաւիրել միանգամայն նոյն օրուան հանդէսին , որ պէս զի իրենց ներկայութեամբ պատուելով յիշեալ հանգէսը , միմիկարեն նաեւ խղճալի պատապարեաններն :

Ի դիմաց Հոգաբարձութեան Հիւանդանոցի Սէնէթիք Ս. Մանուէլեան

ԸՅՂ

Թաղական խորհրդոց քարտուղարութեան և դպրոցի տեսչութեան մատին փորձառութեան ստացած և հայերէն և գաղղիկերէն լեզուաց բաւական հմուտ հայազգի վկայեալ անձ մը կը փափաքի վերալինելու պաշտօններէն մէկը կամ երկուքը միանգամայն վարելու գոհացուցիչ ամակաւն , ներքով : Յիշեալ անձը պատրաստ է նաեւ գաւառականութեան պաշտօն վարել՝ մայրաքաղաքիս և կամ գաւառաց ազգային վարժարանաց մէջ :

Ի Ա Ն

Ասաքիւրի Շահանէ հայկանաթը մէքիւլաթը իշուն 429600 գանթալը շայր անապարեան վէ 40000 գանթալը տալի նանը աղիղ իտարէսի հայկանաթը քի ճէման լուղումի օլան 439600 գանթալը սամանն պահաւ մագպուղ սէնէթըրինին վերուտինտէ սիմ մէճիլիյէ 21 1/2 դր ճիւսապը ինչ սիւլի Լալիլնէ էմվալինտէն վէ սիւլանը տալի Սէլանիքտէն մա

ստա նիդալիյէ խաղղիսիլին հալալէսի օլան մահալէրին հէր գանդիլինտէն միւլթէահիւա թալէպ իտէր իսէ հէվալէթէն թէսվիյէ օլունմաք շէրալիլի ինչ պէհէր գանթալը 12 դր թալիլիէ Եօհէսիլտէ օլապ թէմուղըրումինին 15 իճի վէնճէնպիհ կիւնի գարարը գաթիսի վէրիլճէկիլնտէն , թալիլիլիլ թալիլ օլանլարն եէվմը մը մէքիւրտէ Տարը Շուրայի աւքէլիյէ կէլմէլէրի :

7 թէմուղ 1876

2

Պապը Սէրասքէրի

Ասաքիւրի շահանէ Սէրահանէ անապարեան մուպայեա օլունմաք օլան 4000 քըլէ եէրլի մալը սիւհալեալը քէօսէլէնին էսմանը սիմ մէճիլիլիլ երթիլ պիլէր պուշուք դրուհիսալըլա իղլիտ էմվալինտէն թիւ օլունմաք իւղէրէ հալալէ վէրիլէք շարթըլըլա պէհէր քըլէսի 26 դրու 10 փարայա օլարաք թալիլիլ Եօհէսիլտէ օլուպ թէմուղըրումինին օնիլիլիլիլ փաղար էրթիսի կիւնիլ գարարը գաթիսի վէրիլճէկիլնտէն , թալիլիլիլ թալիլ օլանլարն եէվմիլմէլքիւրտէ Տարը Շուրայի աւքէլիյէ կէլմէլէրի :

8 թէմուղ 1876

1

Պապը Սէրասքէրի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄԻՐԶԱ ԵՒ ԱՆՆԱՅ

Վէր ՍԶԳԱՅԻՆ

Գրեց Ռ. Գ. Բաբեյան

Զմիւռնիա Տպարարութիւն Տէտէան

Գրեթէ առաջին անգամն է որ ազգային ընտիր վկայասանութիւն կոչուելու արժանի սոյն գոյորիկ բաւոյալից և ճարտարահիւս վէպն ի լոյս կ'ընծայի երկասիրութեամբ Պ. Ռ. Գ. Բարխուտարեանցի : Այս ընտիր գործը կրկին առաւելութեամբ կը ներկայանայ ընթերցասէր Ազգայնոց ու շաքրութեան . նախ փան զի Մեծ . հեղինակը քաջ վկայասաններու յատուկ եղած ճարտար հիւսուածքով մը իւր վէպը խիստ հետաքրքրաշարժ և ախորժիկ ըրած է . երկրորդ՝ իւր նիւթը Ռուսական Հայաստանի Սիւնեաց աշխարհի (Վարապաղ) դիւրօքէից մէջն քաղած ըլլալով , այն կողմերու ազգայնոց շինական կենաց , ընտանեկան հնաւանդ սովորութեանց և բանաստեղծական ոգւոյն ճշգրիտ պատկերը կը ներկայանցէ հեռաւոր Ազգայնոց :

Պէտք է յիշել որ Մեծ . հեղինակը Կ. Պոլոյ աշխարհիկ մաքուր լեզուալօրինած է իւր վէպը :

Կը վաճառի Եփեսոս-ճամբ Զինիլիլըլէր ճատտէսի թիւ 8՝ Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը , զին 1 Փրանք 75 սանթիմ :

ՄԵՆԵԱՅ

ԺՈՂՈՎԱԾՑ ԵՒ Ի ԼՈՅՍ ԷՄԾ

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՏՏԱՆՑ

Նուիրեալ յանուն Ազգ. Յովսէփոյ Իդիլիկեան Գլխաւոր

436 երեսէ բաղկացեալ նոր երկասիրութիւն մ'է Գրե . Սրուանձտեանց Տ. Գարեգին ուսումնական և արդիւնաւոր վարդապետին : Նիւթերը զանազան են և հետաքրքրական , բանասիրական , տեղագրական և հնախօսական , գոյորիկ և զգայուն ու ճով մը գրուած :

Կը վաճառի Մէրճանը Եալաղըր խանի ներքե 37 թիւ գրատունը և ամեն գրավաճառաց քով ի Կ. Պօլոս Գին 2 ու կէս Փրանք :

[illegible]